

ՍԱՂՄՈՍ 51

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Կոտրված մեղավորի ներման աղոթք	Ապաշխարության աղոթք	Բժշկության և բարոյական վերականգնման աղոթք	Ներման աղոթք	Չղջման աղոթք
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոսը Նաթան մարգարեի հանդիմանության կապակցությամբ, նրա Բերսաբեի մոտ գնալուց հետո:				
51:1-4	51:1-2 51:3-4	51:1-2 51:3-5	51:1-2 51:3-5	51:1-2 51:3-4բ 51:4գ-5
51:5-9	51:5-6 51:7-9	51:6-9	51:6-9	51:6-7 51:8-9
51:10-13	51:10-11 51:12-13	51:10-12 51:13-14	51:10-13	51:10-11 51:12-13
51:14-17	51:14-17	51:15-17	51:14-15 51:16-17	51:14-15 51:16-17
51:18-19	51:18-19	51:18-19	51:18-19	51:18-19

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն

կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա ապաշխարանքի՝ գղջման Սաղմոսներից մեկն է: Տես՝ Սաղմոս 6, 32, 38, 51, 102, 130 և 143: Սաղմոս 51 հնարավոր է կապ ունի Սաղմոս 32-ի հետ, այսինքն՝ հնարավոր է Դավթի մեղքի հետ է առնչվում, Սաղմոս 32 գրվել է Դավթի կողմից ավելի ուշ:

Բ. Չնայած որ Սաղմոս 51-ի ներածությունը MT տարբերակում հետագա հավելում է, այն կարող է ճշգրտորեն արտացոլել այս Սաղմոսի բուն նյութը: Ամբողջական իրողության մասին կարդացեք 2 Թագավորաց 11 և 12 գլուխները:

Գ. Դավիթը որպես Իսրայելի թագավոր, Աստծո պաշտոնական ներկայացուցիչն էր Իր ժողովրդի մեջ: Նա դավանանել էր այս սուրբ վստահությունը: Նա Աստծուն այս սաղմոսում «ՅԱՀՎԵ» չի կոչում (սակայն այս անունը Սաղմոսաց Գիրք II-ի առանձնահատուկ անուն է): Այնուամենայնիվ, նա դիմում է Աստծո սիրառատ և ողորմած անփոփոխ բնավորությանը (տես՝ Սաղ. 3:6), երբ առանց ներման նետվում է Աստծո ձեռքերի մեջ: ՀԿ-ում գիտակցված, կանխամտածված մեղքի համար գոհ չկա (տես՝ Ղևտ. 4:2, 22, 5:15-18, 22:14):

1. ցանկացել էր մեկ ուրիշի կնոջը
2. ստիպել էր նրան շնություն գործել
3. ստել էր նրա ամուսնուն, որը պալատական գորավար էր
4. հրամայել էր, որ ուրիշները (այսինքն՝ իսրայելական գործից երկերեսանիությունը) սպանեն նրան
5. ապաշխարելու փոխարեն փորձել էր բոլոր այս մեղքերը ծածկել

Դ. Նկատե՛ք, թե քանի տարբեր արտահայտության կերպեր են բնութագրում «ներումը»՝

1. ջնջի՛ր՝ Սաղմ. 51:1,9
2. լվա՛՛ Սաղմ. 51:2,9
3. սրբի՛ր՝ Սաղմ. 51:2
4. մաքրի՛ր՝ Սաղմ. 51:7
5. երեսդ ծածկի՛ր՝ Սաղմ. 51:9
6. ազատի՛ր՝ Սաղմ. 51:14

Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՄԱՆ ԽՈՍՔԵՐ (ՀԿ)

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 51:1-4

¹Ողորմի՛ր ինձ, ո՛վ Աստված՝ Քո գթասիրության համեմատ,

Քո առատ գորովագթությամբ ջնջի՛ր իմ հանցանքները:

²Իմ անօրենությունից ինձ ամբողջովին լվա՛

ու իմ մեղքից ինձ սրբի՛ր:

³Քանի որ ես ընդունում եմ իմ հանցանքները,

ու իմ մեղքը ճիշտ իմ առջև է:

⁴Քո, միմիայն Քո դեմ մեղանչեցի,

Եվ Քո աչքերի առջև այս չարիքը գործեցի,

Որպեսզի Դու իրավացի լինես խոսելիս և հստակ՝ դատելիս:

51:1-2 Ուշադրություն դարձրեք այս պարբերության գրական հոսքին, որը գործ ունի հավաստացյալի կողմից հայտնի՝ գիտակցված մեղքի խոստովանության հետ: Գոյություն ունեն չոքս (հավանաբար հինգ, *Qere*) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ:

1. ողորմի՛ր ինձ – BDB 335, KB 334, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, սա պարբերաբար կրկնվող աղոթքի խնդրանք է (տես՝ Սաղմ. 4:1, 6:2, 9:13, 25:16, 26:11, 27:7, 30:10, 31:9, 41:4,10, 56:1, 57:1, (երկու անգամ) և այլն) ուղղված ողորմած Աստծուն (BDB 337, տես՝ Սաղմ. 86:15, 103:8, 111:4, 116:5, 145:8, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ)

ա. Քո գթասիրության համեմատ (BDB 338, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED))

բ. Քո առատ գործվագթությանը (այսինքն՝ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ BDB 913 և BDB 933, տես՝ Սաղմ. 25:6, 69:16, 119:156, 145:9)

2. ջնջի՛ր իմ հանցանքները – BDB 562, KB 567, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 51:9, սովորաբար այս բառը կիրառվում է մեղավորներին ջնջելու համար (տես՝ Սաղմ. 9:5, 69:28, 109:13)՝ կյանքից և կյանքի գրքից (տես՝ Ելից 32:32-33, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐԸ):

Այս «վերապրած» ներման և աստվածային փոխհարաբերության վերականգնման հասկացությունը նաև կարելի է գտնել ՆԿ-ում, հատկապես Եբր. 9:14, 1 Հովհ. 1:7, 9:

«Մեղքի» համար կիրառվող այս նույն երեք ԳՈՅԱԿԱՆՆԵՐԸ նաև գտնվում են Ելից 34:7-ում: Չարմանալիորեն «ջնջել» ԲԱՅԸ գտնվում է Ելից 32:32-33-ում: Հնարավոր է, որ Սաղմոսերգուի մտքում այդ պահին Ելից գիրքն էր:

ԲԱՅԸ նաև գտնվում է Ես. 43:25, 44:22-ում: Այն հաստատում է այն մեծ ճշմարտությունը, որ երբ Աստված ներում է՝ Աստված մոռանում է. ուշադրություն դարձրեք Ես. 1:18, 38:17, 43:25, 44:22, Միքիա 7:19: Մի քանի տարբեր փոխաբերություններ են կիրառվում, սակայն բոլորն էլ ունեն «տեսադաշտից դուրս, մտքից դուրս» իմաստը:

ՀՄԱ-ում թանաքը ծծմբային էր: Երբ մարդիկ գրում էին պապիրուսե թղթի վրա, թանաքը ներծծվում էր բույսի նյութի մեջ և հնարավոր չէր ջնջել: Ինչ-որ բան ջնջելը Աստծո հրաշքն էր, ճիշտ ինչպես ներկած գործվածքը սպիտակեցնելը (տես՝ Եսայի 1:18) նույնպես անհնար էր (այսինքն՝ սպիտակեցնող նյութեր չկային): Ներումը Աստծո հրաշքն է:

3. լվա՛ ինձ – BDB 460, KB 459, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմոսներում միայն այստեղ է և *Piel* ԱՆԿԱՏԱՐը Սաղմոս 51:7-ում է. կիրառվում է մեծամասամբ Դևտացիների գրքում ծիսական լվացումների համար:

4. ամբողջովին (MT *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԲԱՅԱՐՉԱԿ, սակայն Մագորեթիկ Հրեա գիտնականները առաջարկում էին փոխել մեկ այլ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՈՎ) – BDB 915, KB 1176, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

5. մաքրի՛ր ինձ – BDB 372, KB 369, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմոսներում միայն այստեղ է, իսկ *Qal* ԱՆԿԱՏԱՐԸ Սաղմ. 51:7-ում. կիրառվում է մեծամասամբ Դևտացիների գրքում՝ երբ ինչ-որ բան մաքուր էր հայտարարվում:

51:1 «հանցանքները» Աստծո դեմ մարդկային ապստամբության համար կիրառվող մի քանի տերմին կա այս պարբերության մեջ:

1. հանցանք՝ Սաղմ. 51:1,3 – BDB 833, տես՝ Ես. 59:12-13, Ամովս 5:12, Միքիա 1:5, (երկու անգամ), 13, դրա հիմնական իմաստը Աստծո դեմ ըմբոստանալն ու ապստամբելն է

2. անօրենություն, Սաղմ. 51:2,5,9 – BDB 730, տես՝ Սաղմ. 32:5 (երկու անգամ), դրա հիմնական իմաստը «բաց թողնելն է». հիմնական արմատը հաճախ կիրառվում է «մեղքի պատարագի» համար

3. չարություն՝ Սաղմ. 51:4 – BDB 948 II, շատ տարածված բառ է, տես՝ Սաղմ. 5:4, 7:4, 9, 10:6, 15, 23:4, 34:13, 14, 16, 36:4, 37:27, 41:5, 49:5, 52:3, 54:5, և այլն:

Մարդիկ կարող են ասել, թե որքան կարևոր է գաղափարը մշակույթի՝ լեզվի համար նրանով, թե ինչքան տերմիններ են կիրառվում գաղափարը փոխանցելու կամ հստակեցնելու համար: Եբրայերենն ունի Աստծո դեմ մեղքի, ապստամբության համար գործածվող շատ բառեր:

51:2 «մեղք» Այս ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 308) կարելի է գտնել Սաղմ. 51:2,3,9,13-ում: ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 307)՝ Սաղմ. 51:5,9-ում: ԲԱՅԸ (BDB 306, KB 305)՝ Սաղմ. 51:4,7-ում:

51:3-4 Այս համարները հայտնում են մեղքի ներքին հետևանքները և Աստծո հետ հաղորդակցության սարսափելի ընդհատումը:

1. Ես ընդունում եմ իմ հանցանքները – դրանք տգիտության մեղքեր չեն, այլ բացեիբաց ապստամբություն:
2. Իմ մեղքը միշտ իմ առջև է – Մեղքի զգացումը չի կարող թեթևանալ կամ նվազել: Այն մշտական հիշեցում է խաթարված փոխհարաբերության և դրա հետևանքների մասին:
3. Քո դեմ, միամիայն Քո դեմ, ես մեղանչեցի – Սա աստվածաբանական սահմանում է (տես՝ Ծննդ. 20:6, 2 Թագ. 12:13, Սաղմ. 41:4): Մեղքը հայտնի է միայն այն ժամանակ, երբ մարդու գործողությունը Աստծուց տրված պատվիրանի դեմ է (տես՝ Հռոմ. 3:20, 25, 4:15, 5:13, 20, Գործք 17:30):

Սա չի թերագնահատում զոհի ցավը, այլ նշում է, որ ի վերջո բոլոր մեղքերն էլ միակ Աստծո դեմ են ուղղված:

51:4գ-դ TEV որսում է պոեզիայի այս երկու տողերի նշանակությունը:

«Դու իրավացի ես ինձ դատելիս, և արդար ես՝ ինձ դատապարտելիս»:

Սա մեջբերվում է Պողոսի կողմից LXX-ից Հռոմ. 3:4-ում: Այն ներկայացվում է «Թող Աստված ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ՝ սուտ»:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 51:5-9

⁵Վհա անօրենության մեջ եմ ես ձևավորվել,

Ու իմ մայրը մեղքի մեջ է ինձ հղացել:

⁶Վհա Դու ճշմարտություն ես ուզում ներսում .

Ու ծածուկ տեղում իմաստությունն ինձ ճանաչել ես տալու:

⁷Չոպայով մաքրի՛ր ինձ, ու կմաքրվեմ:

Լվա՛ ինձ, ու ձյունից ավելի ճերմակ կլինեմ:

⁸Ցնծություն ու ուրախություն լսել տուր ինձ,

Թող ցնձա՛ն իմ ոսկորները, որ կոտրատեցիր:

⁹Երեսդ ծածկի՛ր իմ մեղքերից ու ջնջի՛ր բոլոր անօրենություններս:

51:5 Այս համարը հնարավոր է համընկնում է Սաղմ. 51:1-4-ի հետ: Սա արդարացում չէ, այլ ընկած մեղավոր մարդկության սարսափելի վիճակը (տես՝ Ծննդ. 8:21, 3 Թագ. 8:46, Հոր 14:1-4, 15:14, 25:4, Սաղմ. 58:3, Առակ. 20:9, Եսայի 48:8, Հռոմ. 3:9-18, 23, Եփես. 2:3, բոլորն էլ արտահայտում են Ծննդոց 3-ում մարդկության անկման իրողությունը: Ճիշտ է, որ ռաբբիներից շատերը շեշտադրում են մեղքի սկիզբը որպես Ծննդոց 6: Պողոս Առաքյալը ՆԿ-յան հեղինակ է, ով կենտրոնանում է Ծննդոց 3-ի վրա որպես մեղքի և դրա հետևանքների աղբյուրը):

Ինձ համար աստվածաբանական խնդիրը երեխաների մեղավորություն է նախքան բարոյական պատասխանատվության տարիքը: Կալվինիզմը շեշտադրել է մարդկության ամբողջական ապականությունը՝ բոլոր ոլորտներում, ծնունդից մինչև մահ: Ես ավելի հակված եմ մարդու գիտակցված ցանկության հասկացությանը: Սա նշանակում է, որ քանի դեռ երեխաները չեն հասկանում, որ խախտում են Աստծո օրենքները, նրանք չեն խախտում: Մեղքը պարունակում է բացահայտ ապստամբություն: Մենք մեղավորներ ենք Ադամի, Եվայի մեջ (տես՝ Հռոմ. 5:12-21) և ինչպես նաև մենք ենք ընտրում մեղանչել: Երկուն էլ ճիշտ են:

51:6-9 Սաղմոսերգուն խնդրում է Աստծուն, որ վերականգնի իրեն իր փոխհարաբերության նախկին դիրքին: Նա ընդունել է իր մեղքը (Սաղմ. 51:3-4) և ներում հայցել (Սաղմ. 51:1-2): Այս պարբերությունը կրկնում է սրանք՝

1. ընդունում է իր մեղքերը՝

ա. Սաղմ. 51:5

բ. երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ

1) «երեսդ ծածկի՛ր իմ մեղքերից» - BDB 711, KB 771, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2) «ջնջի՛ր բոլոր անօրենություններս» - նույնը ինչ Սաղմ. 51:1 («Աստծո գիրքը» նույնպես նշվում է Սաղմ. 139:16-ում, տես՝ «ծածուկ» բառի համար ստորև տրված գրառումը):

2. ներում է փափագում

ա. Աստված ցանկանում է «նշարտությունը մեր ներսի անձի մեջ» (BDB 711), նկատել «ծածուկ» [BDB 712] բառի կիրառությունը Սաղմոս 139:15-ում:

բ. Աստված, խնդրում եմ, որ այդ նշարտությունը հայտնի դարձրում

գ. աղոթքի խնդրանքներ (6 ԱՆԿԱՏԱՐՆԵՐ)

1) մաքրի՛ր ինձ – BDB 306, KB 305, *Piel* ԱՆԿԱՏԱՐ

2) ես մաքուր կլինեմ – BDB 372, KB 369, *Qal* ԱՆԿԱՏԱՐ (այսինքն՝ մաքրվելու արդյունքը)

3) լվա՛ ինձ – BDB 460, KB 459, *Piel* ԱՆԿԱՏԱՐ

4) ձյունից ավելի ճերմակ կլինեմ – BDB 526, KB 517, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ (այսինքն՝ լվացվելու արդյունքը, տես՝ Ես. 1:18)

5) ցնծություն (BDB 965) և ուրախություն (BDB 970) լսել տուր ինձ – BDB 1033, KB 1570, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ

6) թող ցնծան այն ոսկորները – BDB 162, KB 189, *Qal* ԱՆԿԱՏԱՐ («կոտրված ոսկորները» ՀԿ-ում աստվածային դատաստանի դարձվածք էր, տես՝ Եսայի 38:13, Ողբ 3:4)

Սաղմոսերգուն խորապես ցանկանում է, որ այն մտերմիկ փոխհարաբերությունը, որ ուներ Աստծո հետ, որը խաթարվել էր իր մեղքի պատճառով, վերականգնվեր Աստծո շնորհքով և ողորմությամբ:

51:6 «ուզում» Այս ԲԱՅԸ (BDB 342, KB 339, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) կիրառվում է Սաղմ. 51:6-ում այն բանի համար, ինչ Աստված «ցանկանում է» (այսինքն՝ մարդու ներսում նշարտությունը) և Սաղմ. 51:16-ում՝ այն ինչ Աստված չի ցանկանում (*Qal* ԱՆԿԱՏԱՐ, այսինքն՝ մակերեսային զոհերը կամ գիտակցված մեղքերի համար զոհերը):

51:7 «գոպա» Անապատային փոքրիկ բույս (BDB 23), որը օգտագործվում էր փնջով, որպեսզի ցողվեին հեղուկներ ծիսական արարողությունների ժամանակ:

1. Չատկական գառան արյունը տների դրանդիքների վրա՝ Ելից 12:21-22

2. բորոտների մաքրման արարողության ժամանակ՝ Ղևտ. 14:4, 6 (բորոտված շինությունների համար, Ղևտ. 14:49, 51, 52)

3. Կարմիր Երինջին այրելու ծեսի հետ կապված (այսինքն՝ մաքրման մոխիրը)՝ Թվոց 19:6, 18

4. Մովսեսի հետ կապված, որ ցողեց Օրենքի գիրքը՝ Եբր. 9:19, տես՝ Ելից 24:6-8

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 51:10-13
¹⁰Ո՛վ Աստված, մաքուր սիրտ ստեղծի՛ր մեջս
Եվ իմ ներսում շիտակ հոգի՛ նորոգիր:
¹¹**Քո ներկայությունից ինձ դուրս մի՛ գցիր**
Ու Քո Սուրբ Հոգին ինձնից մի՛ վերցրու:
¹²**Քո փրկության ցնծությունն ինձ վերադարձրու,**
Ու Քո ազատ Հոգով ինձ հաստատի՛ր:
¹³**Այն ժամանակ օրինազանցներին կտվորեցնեմ Քո ճանապարհները,**
Ու մեղավորները Քեզ կղառնան:

51:10-13 Այս պարբերությունը նաև ունի մի քանի աղոթքի խնդրանք (ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ, ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐ), որոնք անձնական հավատքի նորոգության կոչ են անում: Մա պետք է ծնունդ առնի Աստծո գերիշխան գործերի շնորհիվ, սակայն սաղմոսերգուն պետք է իրեն ներկայացնի դրա համար, որպեսզի այն իրագործվի՝

1. իմ մեջ մաքուր սիրտ ստեղծիր – BDB 135, KB 153, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Եզեկ. 36:26-27, նա ցանկանում է հրաշք կամ վերաստեղծում (*bara* կիրառվում է միայն Աստծո համար, Ծննդ. 1:1)
2. իմ ներքում շիտակ հոգի նորոգիր – BDB 293, KB 293, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 78:37
3. ինձ Քո ներկայությունից դուրս մի՛ գցիր – BDB 1020, KB 1527, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ 4 Թագ. 13:23, և ժխտականը՝ 4 Թագ. 24:20, Երեմ. 7:15-ում
4. Քո Սուրբ Հոգին ինձնից մի՛ վերցրու – BDB 542, KB 534, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Եսայի 63:10,11, Եզեկ. 36:26-27
5. վերադարձրու ինձ Քո փրկության ուրախությունը – BDB 996, KB 1427, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. Քո ազատ Հոգով ինձ հաստատիր – BDB 701, KB 759, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով՝ համընկնում է #3,4-ի հետ:

Նկատե՛ք հավատքի ներքին, անձնական ասպեկտի շեշտադրությունը (այսինքն՝ Եսայի 26:9): Հոգևոր նորոգության արդյունքը կլինի՝

1. օրինազանցներին կսովորեցնեմ Քո ճանապարհները – BDB 540, KB 531, *Piel* ԸՂԶԱԿԱՆ, նկատեք, որ առաջինը պետք է լինի Աստծո հետ փոխհարաբերությունն ու գիտությունը, տես՝ Եզրաս 7:10
2. մեղավորները դարձի կգան (բառացի՝ «ես կդառնան») նույն ԲԱՅԸ ինչ Սաղմ. 51:12ա-ում, «վերականգնել», սակայն *Qal* ԱՆԿԱՏԱՐ

51:10 «սիրտ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏԸ: Մարդկության յուրահատուկ արարումը, որպես Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված (տես՝ Ծննդ. 1:26-27) և անձնապես «ձևավորված՝ ստեղծված» Աստծո կողմից (Ծննդ. 2:7), իրեն դարձնում է՝

1. ֆիզիկական արարած, ինչպես մյուս կենդանիներն այս մոլորակի վրա (տես՝ *nephesh*, տես Սաղմ. 3:2 և Ծննդ. 35:18-ի առցանց գրառումները):
2. հոգևոր արարած, յուրահատուկ կերպով համապատասխանեցված Աստծո հետ փոխհարաբերվելու համար: Այս հոգևոր կողմը արտահայտվում է մի քանի փոխաբերություններով, նմանություններով, տերմիններով՝
 - ա. սիրտ, տես՝ Սաղմ. 36:1, 39:3, 55:4, 109:22
 - բ. երիկամներ, աղիներ, տես՝ Սաղմ. 22:14, Երեմ. 4:19, 31:20, Ողբ 1:20, 2:11
 - գ. հոգի, տես՝ Ես. 57:16, Չաք. 12:1
 - դ. մտքեր, Սաղմ. 94:19

❖ **«հոգի»** Այս տերմինը (BDB 924) կիրառվում է այս Սաղմոսում մի քանի անգամ:

1. «շիտակ հոգի», Սաղմ. 51:10
2. «Քո Սուրբ Հոգին», Սաղմ. 51:11
3. «կամավոր հոգի», Սաղմ. 51:12
4. «կոտրված հոգի», Սաղմ. 51:17

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

51:11բ Շատ մեկնաբաններ հավատում են, որ պոեզիայի այս տողը մեջբերում է 1 Թագ. 11:6, 16:14, 18:12-ից, որտեղ Սավուղը սկզբում ուներ Հոգին, սակայն հետագայում իր կրկնվող մեղքերից հետո Հոգին թողեց իրեն և գնաց Դավթի մետ:

Իմ հարանվանությունն այս Սաղմոսը օգտագործել է՝ հատկապես Սաղմ. 51:12-ը, հաստատելու, որ ոչ ոք չի կարող կորցնել իր փրկությունը, քանի որ այն ասում է. «Քո փրկության ցնծությունն ինձ վերադարձրու»: Սակայն Սավուղի հոգևոր դիրքը անհայտ է: Ես որոշել եմ գոնե ապահովել այս հարցերի հասկացողությունը այս միջոցով՝

1. առաջարկելով ձեզ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ (APHISTEMI)
2. առաջարկելով ձեզ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆ
3. առաջարկելով ձեզ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԱՇԽԻՔ

❖ «Քո Սուրբ Հոգին» ՀԿ-ի մեծ մասում, «Հոգին» Աստծո ուժն է (տես՝ Ծննդ. 1:2), ոչ թե ստույգ անձ (սակայն ուշադրություն դարձրեք Ես. 63:10-11): Այնուամենայնիվ, Հոգու անձ լինելու հասկացությունը զարգանում է ՆԿ-ում: Երկու Հատուկ Թեմաներ կօգնեն ձեզ հստակեցնելու այս հարցը՝

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳՈՒ ԱՆՁ ԼԻՆԵԼԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 51:14-17

**¹⁴Փրկիր ինձ արյան մեղքից, ո՛վ Աստված,
Իմ փրկության Աստված,
Ու իմ լեզուն բարձրաձայն երգելու է Քո արդարության մասին:**

**¹⁵Ո՛վ ՏԵՐ, բա՛ց արա շրթունքներս,
Ու բերանս Քո փառաբանությունն է անելու:**

**¹⁶Քանի որ Դու զոհ չես ցանկանում, որ այն մատուցեմ:
Դու ողջակեզից հաճույք չես ստանում:**

**¹⁷Աստծո զոհը կոտրված հոգին է.
Կոտրված ու խոնարհ սիրտը,
Ո՛վ Աստված, Դու չես արհամարհի:**

51:14-17 Այս պարբերությունը շարունակում է հետևյալ միտքը՝

1. ազատելու – BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, սաղմոսերգուն մեղավոր էր և կարիք ուներ ներվելու: Սաղմոս 51:14 հնարավոր է կապված է Դավթի կողմից Ուրիայի սպանության հետ (բառացի՝ «արյուններ», BDB 196, ենթադրվում է վերաբերում է «արյունի հանցանքին», որը «անմեղ մարդու սպանությունն է»):
2. «պրինազանցներին սովորեցնելը» (BDB 540, KB 531, *Piel* ԸՂՁԱԿԱՆ), Սաղմ. 51:13ա-ի բացատրվում է
ա. իմ լեզուն ցնծությամբ երգելու է (Դավիթը երգիչ էր) Քո արդարության մասին (այս կարևոր տերմինը [BDB 842] հիմնականում նշանակում է չափանիշ, քանոն, ուղիղ եզր: «Մեղքի» համար օգտագործվող բոլոր բառերը չափանիշից շեղումն է: Այս համատեքստում այն ունի «վրեժխնդրության» կամ «արդար գործողությունների» նշանակությունը, տես՝ Սաղմ. 71:2, 15, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ):
 - 1) բաց արա լեզուս
 - 2) որ իմ բերանը կարողանա հռչակել Քո փառքը

Սաղմ. 51:16-17-ում նոր միտք է սկսվում: Ղևտացիների 1-7-ում չկա թվարկվածների մեջ մի այնպիսի զոհ, որը գործ ունենա դիտավորյալ, կանխամտածված մեղքի հետ (տես՝ Ղևտ. 4:2,22,27, 5:15-18, 22:14, Թվոց 15:27-28): Եթե լինեք, ապա նա կանեք այդ զոհը (BDB 678, KB 733, *Qal* ԸՂՁԱԿԱՆ), չկար, ուստի նա իրեն զցեց Աստծո ողորմածությանը: Նա վստահեց՝ հավատաց, որ Աստված չի մերժի (երկուսն էլ *Niphal* ԴԵՐԲԱՅՆԵՐ):

1. կոտրված հոգին ի դեմ մեղքի (BDB 990, տես՝ Սաղմ. 34:19, Ես. 61:1, Երեմ. 23:9)
2. խոնարհ սիրտ (բառացի՝ «փշրված», BDB 194, տես՝ Ես. 57:15)

Սա վերաբերում է Հոռմ. 12:1-2-ի տեսակի երկրպագուին: Ապաշխարությունը ազդեցություն է թողնում Աստծո վրա (տես՝ Սաղմ. 34:18):

51:15

NASB (1970) «ՏԵՐ»

NASB (1995) «Տեր»

MT տալիս է *Ugnn*, ոչ թե ՅԱՀՎԵ: Իսրայելի Աստծո ուխտի անունը չկա Սաղմոսացի Գիրք II-ում այնքան հաճախակի, որքան Առաջին Գրքում: Որոշ գիտնականներ ենթադրում են, որ Գիրք Երկրորդի հավաքագրողը ՅԱՀՎԵ անունը շատ տեղերում փոխել է *Eynhsh*:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 51:18-19

18Քո բարեհաճությամբ բարիք արա Միոնին,

Կառուցիր Երուսաղեմի պարիսպները:

19Այն ժամանակ Դու կհավանես արդարության զոհաբերությունները,

Ողջակեզներն ու ամբողջովին այրված զոհերը .

Այն ժամանակ զոհասեղանիդ վրա ցլիկներ կմատուցեն:

51:18-19 Սաղմոսը փակվում է թվացյալ առանձնացված՝ տարբեր մտքով: Անակնկալ փոփոխություն կա անհատականից դեպի ազգային աղոթքի՝ Աստծո օրհնության համար («բարիք արա», BDB 405, KB 408, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) Երուսաղեմի վրա: Աղոթքից կարելի է հասկանալ, որ Երուսաղեմը խնդիրներ ուներ:

1. կառուցիր նրա պարիսպները

2. վերականգնիր զոհաբերության համակարգը

Շատ մեկնաբաններ օգտագործել են Սաղմ. 51:16 թերագնահատելու զոհը, սակայն Սաղմ. 51:19-ի շնորհիվ, լավագույնս երևում է, որ այն շեշտադրում է «ղիտավորյալ» և «ոչ ղիտավորյալ» մեղքի միջև տարբերությունը:

Նաև ուշադրություն դարձրե՛ք, որ ոչ մի ժամանակ սա չի համապատասխանում Դավթի կյանքի հետ: Չկա MSS ապացույց, որ դրանք ավելացվել են Մամոսների շարադրումից կամ հավաքագրումից հետո:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Սաղմոսերգուն տալիս է երկու պատճառ Աստծո համար ողորմած լինելու իր հանդեպ: Որո՞նք են դրանք և ինչո՞ւ են դրանք կարևոր:
2. Թվարկե՛ք այն տարբեր բառերը, որոնք կիրառվում են այս Սաղմոսում նկարագրելու ներումը՝ թողությունը:
3. Բացատրե՛ք Սաղմ. 51:5-ը ձեր սեփական բառերով:
4. Ի՞նչ է նշանակում Սաղմ. 51:4-ը ՀԿ-յան միջավայրում:
5. Արդյո՞ք Աստված մեղավորներից վերցնում է Սուրբ Հոգին:
6. Բացատրե՛ք Սաղմ. 51:16-17-ի կապը Սաղմ. 51:19: Բացատրե՛ք, թե «ղիտավորյալ՝ գիտակցված» և «ոչ ղիտավորյալ՝ չգիտակցված» մեղքերի միջև տարբերությունն ի՞նչ կապ ունի զոհաբերության համակարգի հետ:
7. Ինչպե՞ս է Սաղմ. 51:18-19 կապված Սաղմոսի մնացած մասի հետ: